«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Մաթեմատիկական Մեքենաների Գիտահետազոտական Ինստիտուտ» Փակ Բաժնետիրական Ընկերության Ղեկավարությանը և Բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի Մաթեմատիկական Մեքենաների Գիտահետազոտական Ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Խումբ) կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ նաև ֆինանսական հաշվետվություններ), որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ նաև ՖՀՍՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (այսուհետ նաև ԱՍՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (այսուհետ նաև ՀԷՍՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՍԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՍՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, որը այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

10 հունիսի, 2022թ.

Աուդիտի ղեկավար
Գ. Մովսիսյան

Տնօրեն
Տ. Զորյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	3,047,148	2,985,177
Ոչ նյութական ակտիվներ	5	3,185	783
Ներդրումային գույք	6	316,098	329,147
Հետաձգված հարկային ակտիվներ		16,321	18,276
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*3,382,752*	*3,333,383*
Ընթացիկ ակտիվներ			
Ապրանքանյութական պաշարներ	7	177,736	179,040
Դեբիտորական պարտքեր	8	95,420	98,858
Տրված կանխավճարներ	8	17,438	5,051
Դրամական միջոցներ	9	475,340	486,049
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*765,934*	*768,998*
Ընդամենը ակտիվներ		**4,148,686**	**4,102,381**
Կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	10	67,780	67,780
Պահուստային կապիտալ	10	1,581	-
Ակտիվների վերագնահատման պահուստ	10	3,455,057	3,465,799
Չբաշխված շահույթ	10	12,632	(901)
Ընդամենը կապիտալ	10	**3,537,050**	**3,532,678**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	54,141	58,964
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	36,078	36,078
Հետաձգված հարկային պարտավորություններ		129,953	133,293
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*220,172*	*228,335*
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	-	50
Կրեդիտորական պարտքեր	8	156,792	103,521
Ստացված կանխավճարներ	8	223,799	207,440
Պահուստներ	13	10,873	30,357
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*391,464*	*341,368*
Ընդամենը պարտավորություններ		**611,636**	**569,703**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**4,148,686**	**4,102,381**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրեն
Ռ. Հարությունյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Մարգարյան

10 հունիսի, 2022թ.

M. S.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	14	257,174	464,627
Վաճառքի ինքնարժեք	14	(232,198)	(316,277)
Համախառն շահույթ		**24,976**	**148,350**
Այլ եկամուտներ	15	555,553	412,455
Վարչական ծախսեր	16	(434,181)	(384,244)
Այլ ծախսեր	17	(126,417)	(137,705)
Գործառնական գործունեության արդյունք		**19,931**	**38,856**
Ֆինանսական եկամուտներ	18	22,537	19,363
Ֆինանսական ծախսեր		-	-
Ֆինանսական գործունեության արդյունք		**22,537**	**19,363**
Շահույթ / վնաս նախքան հարկումը		**42,468**	**58,219**
Շահութահարկ	19	(11,542)	(22,157)
Համապարփակ ֆինանսական արդյունք		**30,926**	**36,062**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրեն
Ռ. Հարությունյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Մարգարյան

10 հունիսի, 2022թ.

Կ.Տ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Ակտիվների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	67,780	-	3,477,010	(22,709)	3,522,081
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	36,062	36,062
Ուղղակի կապիտալում ճանաչված ծախս	-	-	(11,211)	-	(11,211)
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(14,254)	(14,254)
2020 թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ	67,780	-	3,465,799	(901)	3,532,678
2021 թ. հունվարի 1-ի դրությամբ	67,780	-	3,465,799	(901)	3,532,678
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	30,926	30,926
Հատկացում պահուստային կապիտալին	-	1,581	-	(1,581)	-
Ուղղակի կապիտալում ճանաչված ծախս	-	-	(10,742)	-	(10,742)
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(15,812)	(15,812)
2021 թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ	67,780	1,581	3,455,057	12,632	3,537,050

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրեն
Ռ. Հարությունյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Մարգարյան

10 հունիսի, 2022թ.

Ա.Տ.

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	9	486,049	641,889
Գործառնական գործունեություն			
Մուտքեր գործառնական գործունեությունից			
Մուտքեր արտադրանքի, ապրանքների վաճառքից և մատուցված ծառայություններից		925,300	778,024
Այլ մուտքեր		38,793	2,469
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից		*964,093*	*780,493*
Ելքեր գործառնական գործունեությունից			
Գնված ապրանքների ու նյութերի, ձեռքբերված աշխատանքների ու ծառայությունների դիմաց		361,045	225,703
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ		343,682	415,758
Հարկեր և այլ պարտադիր վճարներ		281,456	294,594
Սոցիալական ապահովության վճարներ		7,978	3,650
Այլ ելքեր		4,452	17,307
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից		*998,613*	*957,012*
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**(34,520)**	**(176,519)**
Ներդրումային գործունեություն			
Մուտքեր ներդրումային գործունեությունից			
Տոկոսների ստացում		22,180	15,563
Այլ մուտքեր		-	4,298
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից		*22,180*	*19,861*
Ելքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		-	445
Փոխառությունների տրամադրում և այլ ելքեր		-	-
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից		-	*445*
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		**22,180**	**19,416**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

(Շարունակություն)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր ֆինանսական գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների ստացում		-	-
Այլ մուտքեր		22,147	-
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից		*22,147*	-
Ելքեր ֆինանսական գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների մարում		50	-
Տոկոսների վճարում		15,711	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից		*15,761*	-
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		6,386	-
Դրամական միջոցների փոփոխություն		(5,954)	(157,103)
Արտարժութային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		(4,755)	1,263
Դրամական միջոցների մնացորդը ժամանակաշրջանի վերջում	9	475,340	486,049

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրեն
Ռ. Հարությունյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Մարգարյան

10 հունիսի, 2022թ.

Կ.Տ.